ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱԿԵՐՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
МУНИЦИПАЛИТЕТ
с.ГЕХАКЕРТ

Գեղակերտի գյուղապետարան հեռ. 093250663 , 0231 63447

Село Гехакерт тел. 093250663 , 0231 63447

N 58

«01» «06» 2012թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն մարզպետ

Կից ներկայացվում է ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ղեկավարի 2012 թվականի մայիս ամսվա ընթացքում ընդունած որոշումները: Մայիս ամսին կարգադրություններ չեն արձակվել:

Առդիր՝ 7 էջ:

Համայնքի ղեկավար Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Մուտք 5006-12
«01» 06 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14>> մայիսի2012թ. N 35

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 17-ի թիվ11 արտահերթ նիստի թիվ3 Ն որոշումը և համայնքի բնակիչ Ալլա Խաչատրյանի դիմումը

Որոշում եմ՝

1.Ալլա Խաչատրյանին տալ թույլտվություն՝ համայնքի տարածքում՝ հիմնական շինության ներսում զբաղվելու ոգելից խմիչքի վաճառքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2012թվական մայիսի 14
Գ. Գեղակերտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14>> մայիսի 2012թ. N34

### ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 17-ի թիվ11 արտահերթ նիստի թիվ3 Ն որոշումը և համայնքի բնակիչ Ալլա Խաչատրյանի դիմումը

Որոշում եմ՝

1.Ալլա Խաչատրյանին տալ թույլտվություն՝ համայնքի տարածքում՝ հիմնական շինության ներսում զբաղվելու ծխախոտի արտադրանքի վաճառքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2012թվական մայիսի 14
Գ. Գեղակերտ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

## ՈՐՈՇՈՒՄ

<<14>> մայիսի 2012թ. N33

### ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի փողոցների անվանակոչման և համարակալման մասին>> թիվ 2 որոշումը և Աիդա Բուդաղյանի դիմումը

Որոշում եմ՝

1. 002-009 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողակտորին տրամադրել հասցե՝ Առնո Բաբաջանյան փողոց, 15 ;
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի մարզային տարածքային սպասարկման Վաղարշապատի գրասենյակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2012թվական մայիսի 14
Գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<14>> մայիսի 2012թ. N32

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 2-ի թիվ 9 նիստի << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գեղակերտի գյուղական համայնքի փողոցների անվանակոչման և համարակալման մասին>> թիվ 2 որոշումը և Աիդա Բուդաղյանի դիմումը

Որոշում եմ՝

1. 002-008 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողակտորին տրամադրել հասցե՝ Առնո Բաբաջանյան փողոց, 17 :
2. Սույն որոշման մեկ օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի մարզային տարածքային ստորաբաժանման Վաղարշապատի գրասենյակ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

2012թվական մայիսի 14
Գ. Գեղակերտ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# ՈՐՈՇՈՒՄ N31Ա

<<02>>մայիսի 2012թ.

### ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի<<Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման կարգը հաստատելու մասին>> N 1582-Ն որոշման 3-րդ կետը և ղեկավարվելով նույն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով

Որոշում եմ

1.Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 1582-Ն որոշման 3-րդ կետի Գեղակերտի համայնքապետարանում ստեղծել <<Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման համայնքային հանձնաժողով>>:
2. Հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
3.Հաստատել հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
4. Հանձնաժողովի ստեղծման մասին որոշման մեկական օրինակներ տրամադրել մարզային հանձնաժողովին և մարզային փրկարարական վարչությանը /հավելվածներով/:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար

Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆ
2012թվական մայիսի 2
Գ. Գեղակերտ

Հավելված N1
ՀՀ Արմավիրի մարզի
Գեղակերտի համայնքապետի
2012 թ. մայիսի 02-ի N31Ա որոշման

Կազմ
արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման համայնքային հանձնաժողովի

1. Հանձնաժողովի նախագահ՝ Առաքելյան Սերյոժա / համայնքապետ/
2. Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Զաքարյան Դավիթ /հողաշինարար/
3. Քարտուղար Ղազարյան Հովհաննես
4. Անդամներ՝ Վարդանյան Արայիկ /գյուղատնտեսության գծով մասնագետ/
   Կյուրեղյան Գևորգ /քաղաքաշինության գծով մասնագետ/
   Գալստյան Սուսաննա /ֆինանսական գծով մասնագետ/
   Հակոբյան Աննա /առողջապահության գծով մասնագետ/
   Ստեփանյան Ստեփան/անասնաբուժական գծով մասնագետ/
   Պետրոսյան Ավետիս /ոռոգման համակարգի մասնագետ/
   Մարտիրոսյան Արտակ/գազամատակարարման ցանցի աշխատող/
   /ջրամատակարարման ցանցի աշխատող/
   Պողոսյան Հրաչիկ /էլեկտրամատակարարման ցանցի աշխատող/

Հավելված N2
ՀՀ Արմավիրի մարզի
Գեղակերտի համայնքապետի
20[illegible]թ. մայիսի 2 N 31Ա որոշման

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1.Սույն աշխատակարգով սահմանվում է Արմավիրի մարզի Գեղակերտ համայնքի տարածքում գնահատման ու հաշվառման ենթակա արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման աշխատանքների կազմակերպումը:

2.Գեղակերտ համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման գործընթացը՝ կախված ընդգրկման ծավալից, հետևանքների բնույթից և նշանակությունից, համապատասխանաբար կազմակերպվում է համայնքի ղեկվարի որոշմամբ ստեղծված և մշտական գործող հանձնաժողովի կողմից:

3.Արտակարգ իրավիճակների հետրանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները հաշվառվում են դրանց առաջացման պատճառների ուսումնասիրման ու վերացման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցման համար միջոցների ձեռնարկելու նպատակով:

4.Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համար՝

1) կազմվում է վնասված գույքի ցանկը՝ նշելով դրանց տեսակը, գտնվելու վայրն ու համառոտ բնութագիրը.
2) ուսումնասիրվում և գնահատվում է վնասված գույքի վիճակը
3) գնահատվում է գույքի պատճառված վնասի չափը:

5. Եթե արտակարգ իրավիճակների հետևանքով զոհվել են մարդիկ, կամ մարդկանց առողջությանը պատճառվել է վնաս, ապա Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչությունից դեպքի մասին տեղեկատվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:

6. Տեղեկատվությունը ներառում է՝

1)դեպքի օրը, ամիս, տարեթիվը, ժամը և վայրը.
2)տուժողների ազգանունները, անունները, հայրանունները, նրանց ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը,բնակության ը աշխատանքի վայրերը.
3)դեպքի վայր մեկնած՝ փրկարարական աշխատանքներ իրականացնող խմբի (անձանց ) կազմը (անձնական տվյալները).
4.դեպքը բնութագրող այլ հանգամանքներ՝ իրավիճակը, եղանակային պայմանները և այլն:

7.Գեղակերտ համայնքի տարածքում իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գրահատման նպատակով ստեղծված համայնքային հանձնաժողովը գործում է հետևյալ ուղղություններով՝

1)գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատում.

2)բնակչության գույքին հասցված վնասների գնահատում.
3)ենթակառուցվածքներին հասցված վնասների գնահատում.
4)բժշկասանիտարական հնարավոր վնասների գնահատում:

8.Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովի կազմում՝ըստ ուղղությունների ընդգրկվում են՝

1)մասնագետներ գյուղատնտեսության, ֆինանսական, անասնաբուժության ոլորտից,համայնքի բժշկական անձնակազմից, գազամատակարարման, ջրամատակարարման, էլեկտրամամատակարարման և ոռոգման համակարգերի աշխատակիցներից:
2)հանձնաժողովի աշխատանքային հրավիրում են մասնագետներ Արմավիր մարզային փրկարարական վարչությունից և մարզային հակահրդեհային տեսչությունից:

9.Համայնքային հանձնաժողովի կողմից կազմված ակտերը քննարկվում են մարզային հանձնաժողովում, և համաձայնեցված ակտերը ն ներկայացվում են հանրապետական հանձնաժողով:

10.Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների մասին վերջնական տեղեկատվությունըն ամփոփում և հրապարակում է արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասները գնահատվող հանրապետական հանձնաժողովը: